Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Հեռագրական կարգադրութեամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը իւր կողմից վերափոխի թաղման ներկայ գտնուելու պատգամաւորներ է նշանակել Թիֆլիսի թեմի առաջնորդ ս. արքեպ. Սաթունեանին և սինոդի անդամ ս. Սրիստակէս արքեպ. Դաւթեանին, իսկ ազգային երեսփոխանական ժողովը նշանակել է իւր կողմից՝ պ. պ. Յովհաննէս Ժամհարեանին Մոսկուայից և Աղէքս. Մելիք-Աղարեանին Թիֆլիզից։

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ «ԼՈՒՄԱՅԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թերթիս խմբագրութիւնը ցաւալի լուրի դոյժն առնելով շտապեց յանուն Սինոդի աւագ անդամ և. տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի հեռաւոր հեռագրով իւր խորին վիշտը յայտնել ս. Էջմիածնի միաբանութեան.

«Էջմիածին

Կաթուղիկոսական տեղակալ բարձր սրբազան Սուրէնեանին

«Հայաստանեաց եկեղեցու երջանկալիշատակ զլխոյ մահուան դոյժը ծանր տպաւորութիւն թողեց մեզ վրայ։

Լումայի խմբագրութիւնը մաղթելով հանգուցեալին յաւիտենական երանութիւն, Էջմիածնի նախամեծար Աթոռին անսասանութիւն, նորա միաբանութեան սէր և միաբանութիւն՝ աղօթում է առ Ամենաբարձրեալը՝ մխիթարել Լուսաւորչի որբացեալ զահը արժանաւոր ընտրութեամբ»։

Կաթուղիկոսի թաղման ներկայ լինելու համար խմբագրութեանս կողմից որպէս պատգամաւորներ մեկնեցան ս. Էջմիածին թերթիս խմբագիր Գիւտ ա. ք. Աղանեանցը և աշխատակցուհի օր. Նուարդ Աղանեանցը, որոնք և պսակ կդնեն մեծ Հայրապետի դագաղի վերայ խմբագրութեան կողմից։